Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ ՇՀԾՁԲ-15/9-17/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.03.2017թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Է. Պողոսյան - ԳԿՎ սպասարկման բաժնի պետ ԳՊ/ԳԱՊ (հանձնաժողովի նախագահ)

Անդամներ

Մ. Միքաելյան - ԳԿՎ վարչատնտեսական և շենքերի շահագործման բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԳԱ

Ա.Ղազարյան՝ գործերի կառավարման վարչության տնտեսագետ ԳՊ/ԳԱ

Կ. Սիրունյան- ԳԿՎ Սպասարկման բաժնի տնտեսվար ԳՊ/ԲԱ

Ա. Գրիգորյան - ԳԿՎ վարչատնտեսական և շենքերի շահագործման բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ

Գնումները համակարգող

Ա. Մարտիրոսյան՝ ԳԿՎ Սպասարկման բաժնի առաջատար մասնագետ

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ ՇՀԾՁԲ-15/9-17/17» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել «Գրիման» ՍՊԸ-ն՝ ք. Երևան, Դավիթաշեն 3 թ., 22-7, էլ. հասցեն՝ office@sphinx.am, Հեռ. (010) 22-44-60, «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ն՝ ք. Երևան, Բաղրամյան 76/3 էլ. հասցեն՝ info@elcomp.am, Հեռ. (+37410) 277883, «ԷԼԼԻՊՍ ՋԻ ԷՅ» ՍՊԸ–ն՝ Ք.Երևան, Ն.Տիգրանյան 27, էլ. հասցեն՝ el@sec.am, Հեռ. (091) 011619:

1.2 Համակարգում 29.03.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

2. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 «ԷԼԼԻՊՍ ՋԻ ԷՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի առաջարկում (հավելված 4) և գնի առաջարկին կից ներկայացվող բացվածքում՝ (հավելված 4,1) մասնակցի անվանումը գրված չէ, ինչպես նաև հավելված 4.1 ներկայացվել է ոչ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Մյուս մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերավ պահանջվող փաստաթղթերը

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	Չ/Հ1	Չ/Հ1
«Գրիման» ՍՊԸ	821 650	985 980
«Էլկոմպ» ՍՊԸ	1 575 000	1 890 000
«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ	2 731 000	3 277 200

4.2 Գնման առարկայի նախահաշվային առավելագույն գինը կազմում է *700 000* յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

5.1 Մերժել «ԷԼԼԻՊՍ ՋԻ ԷՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

5.2 «ՀՀ ՖՆ ՇՀԾՁԲ-15/9-17/17» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվում «Գրիման» ՍՊԸ-ն՝ որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի, իսկ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից՝ «Էլկոմպ» ՍՊԸ-ն:

5.3 Գնահատող հանձնաժողովի նիստը հետաձգել և «Գրիման» ՍՊԸ-ից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, և ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 47-րդ կետի 1-ին մասի համաձայն ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների հարկային պարտավորությունների վերաբերյալ:

՝ 5.4 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավերել սույն արձանագրության 5.2 կետում նշված փաստաթղթերը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, բաց ոչ ուշ քան 2017թ. ապրիլի 5-ին ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Է. Պողոսյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Մ. Միքաելյան

_____ Ա.Ղազարյան

_____ Կ. Սիրունյան

_____ Ա. Գրիգորյան

Գնումները համակարգող ՝ _____ Ա. Մարտիրոսյան